ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից ներկայացված ինքնաբացարկի միջնորդությունը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած ինքնաբացարկի միջնորդությամբ մասնավորապես հայտնել է,

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ին Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը քննվում է նույն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ.Օհանյանի վարույթում՝ ում նախագահությամբ է քննվել նաև «Բի էլ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/10 բողոքը՝ ուստի Ընկերությունը գտնում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը կաշկանդված կլինի իր կողմից կայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/10 բողոքը բավարարելու վերաբերյալ որոշմամբ և խախտելով նախաձեռնված ընթացակարգի օբյեկտիվ քննության սկզբունքը և հիմք ընդունելով իր կայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/10 որոշումը՝ «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ին կներառի Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրել են ՀՀ գնումների հետկապված բողոքներ քննող անձ Լ.Օհանյանին ինքնաբացարկ հայտնել «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ին Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացի քննությունից:

Բողոքներ քննող անձը հետազոտելով ներկայացված ինքնաբացարկի միջնորդությունը գտնում է, որ այն անհիմն է, ենթակա մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 49-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը չի կարող քննել բողոքը, եթե պարզվում է, որ բողոքարկման գործընթացում ներգրավված է իր հիմնադրած կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպություն, կամ տվյալ բողոքարկման ընթացակարգում ներգրավված է իրեն մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձ (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր կամ քույր) կամ այդ անձի հիմնադրած կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպություն: Եթե առկա է սույն մասով նախատեսված պայմանը, ապա տվյալ բողոքի քննման և որոշման կայացման առնչությամբ սույն մասով սահմանված շահերի բախում ունեցող գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ինքնաբացարկ է հայտնում տվյալ բողոքի քննումից:

Վերոնշյալ հոդվածի դրույթների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ օրենսդիրը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ինքնաբացարկ հայտնելու համար նախատեսել է հստակ դեպքեր, որոնց շրջանակը սահմանափակ է և ընդգրկված Օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասում: Այլ կերպ ասած՝ նշված հոդվածը դիսպոզիտիվ չէ, չի սահմանում ինքնաբացարկ հայտնելու այլ հիմք կամ հնարավորություն, քան նախատեսված է իր դիսպոզիցիայում:

Բողոքներ քննող անձը հավելում է նաև, որ Օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին է, որը շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով և իր պարտականությունների ու իրավունքների կատարման ժամանակ պաշտպանված է արտաքին ազդեցություններից: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքներն ուսումնասիրում է պատշաճ մանրամասնությամբ և անաչառորեն: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքով նախատեսված լիազորություններն իրականացնելիս անկախ է գնման գործընթացի

մասնակիցներից, այդ թվում՝ պատվիրատուներից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնյաներից և պարտավոր է ղեկավարվել բացառապես գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կիրառել այն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 47-րդ և 49-րդ հոդվածներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Կրիստալ Քլինինգ» ՍՊ ընկերության կողմից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ինքնաբացարկ հայտնելու վերաբերյալ ներկայացված միջնորդությունը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**